



Disability
Rights
California

California's protection & advocacy system

Կալիֆորնիայի երեխայի ամբողջական կարիքներին ուղղված ծառայությունների ծրագիր

Յուլիս 2018թ., Յրապ. #7132.10 - Armenian

Կալիֆորնիայի օրենսդրությունը Առողջապահության վարչությանը (անգլ.՝ Department of Health Care Services, DHCS) թույլ է տալիս կազմել երեխայի ամբողջական կարիքներին ուղղված ծառայությունների ծրագիր: Այս ծրագիրը Կալիֆորնիայի երեխաներին մատուցվող ծառայությունների (անգլ.՝ California Children's Services, CCS) ծրագրով վճարվող ծառայությունները ներառելու է Medi-Cal-ի կառավարվող բուժխնամքի ծրագրերում: Դա նշանակում է, որ բոլոր CCS և ոչ-CCS ծառայությունները կթույլատրվեն կամ կտրամադրվեն Medi-Cal-ի կառավարվող բուժխնամքի ծրագրի կողմից: Երեխայի ամբողջական

կարիքներին ուղղված ծառայությունների ծրագիրն իրականացվելու է 21 վարչաշրջաններում՝ սկսած 2018թ. հուլիսի 1-ից:¹

Այս հարապարակման մեջ քննարկվում է երեխայի ամբողջական կարիքներին ուղղված ծառայությունների ծրագրը: Նշում. այս հրապարակումը CCS-ին իրավունակ երեխաների և պատանիների համար է, ովքեր օգտվում են Medi-Cal-² ամբողջական փաթեթից Medi-Cal-ի կառավարվող բուժխնամքի ծրագրի միջոցով, և այն վարչաշրջանների համար, որոնք մասնակցում են երեխայի ամբողջական կարիքներին ուղղված ծառայությունների ծրագրին:

1. Ի՞նչ է CCS-ը:

CCS-ը 21 տարեկանից փոքր և CCS-ին համապատասխանող որոշակի առողջական խնդիրներ, օրինակ՝ վարակիչ հիվանդություններ, նյարդային կամ տեսողական համակարգի խնդիրներ ունեցող երեխաների ու պատանիների համար նախատեսված նահանգային ծրագիր է: Այս ծրագրի միջոցով նրանք ստանում են CCS-ին

¹ Առողջապահական վարչության ինսամքի բաժնի գլխավոր համակարգերի պատասխանատու Պատրիսիա Մաք Զլելանդի նամակն ուղղված Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար կազմակերպության վարչաշրջանային գրասենյակին (անգլ.՝ California Children's Services, CCS) (հունվար, 2017թ.) հետևյալ հղումով՝ [Վարչաշրջանի կողմից մշակված CCS-ի երեխայի ամբողջական ծառայությունների մոդելի \(WCM\) իրականացման ուղեցույց, Տե՛ս նաև Կալիֆորնիայի Առողջապահական ծառայությունների վարչության Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար կազմակերպության երեխայի ամբողջական ծառայությունների մոդելը \(վերջին այցելություն՝ 2018թ. մայիսի 29-ին\), Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար կազմակերպության երեխայի ամբողջական ծառայությունների մոդելը \(WCM\): – \(Վերադառնալ \[հիմնական փաստաթղթին\]\(#\)\)](#)

² Ամբողջական փաթեթով Medi-Cal նշանակում է, որ դուք իրավունք ունեք ստանալու Medi-Cal ծրագրով առաջարկվող բոլոր նպաստները: Գործում է 2016թ. մայիսից, ներգաղթյալի բավարար կարգավիճակ չունեցող 19 տարեկանից փոքր երեխաները դառնում են իրավունակ Medi-Cal-ի ամբողջական փաթեթի նպաստների համար: - ([Վերադառնալ \[հիմնական փաստաթղթին\]\(#\)](#))

համապատասխանող իրենց հիվանդության բուժման համար անհրաժեշտ բուժօգնությունը: ³

Կան CCS-ին իրավունակ տոկոսային մեծ քանակով երեխաներ ու պատանիներ, ովքեր ունեն Medi-Cal: ⁴ Medi-Cal ունեցողներից շատերն ընդգրկված են Medi-Cal-ի կառավարվող բուժօգնության ծրագրում: Որոշ երեխաներ ունեն միայն CCS:

Ներկայումս, CCS ունեցող և Medi-Cal-ի կառավարվող բուժօգնության ծրագրում ընդգրկված երեխաներն ստանում են հատուկ բուժօգնություն իրենց CCS-ին համապատասխանող առողջական վիճակի համար մատուցված ծառայության դիմաց վճարվող (անգլ.՝ fee-for-service, FFS) համակարգի միջոցով: ⁵ Նրանք իրենց Medi-Cal-ի կառավարվող բուժօգնության ծրագրի միջոցով ստանում են առաջնային բուժօգնություն և վարքագծի կանոնավորման որոշակի օգնություն: Դա նշանակում է, որ երեխաները բուժօգնությունն ստանում են առանձին՝ տարբեր համակարգերի միջոցով:

Երեխայի ամբողջական կարիքներին ուղղված ծառայությունների ծրագրի առաջնային նպատակն է «[ապահովել] լիարժեք բուժում և

³ CCS-ի մասին մանրամասն տեղեկատվության համար տե՛ս [Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագիրը: – \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁴ Մանրամասն տեղեկությունների համար տե՛ս [Ծրագրի ընդհանուր նկարագիրը: - \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁵ FFS նշանակում է, որ դուք կարող եք դիմել ցանկացած ծառայություն մատուցողի, ով ընդունում է որոշակի բժշկական ապահովագրություն, օրինակ՝ CCS կամ Medi-Cal: Ծառայություն մատուցողները վճարվում են յուրաքանչյուր այցի կամ սպասարկման համար: Կառավարվող բուժօգնության ծրագրով նահանգը պայմանագրեր է կնքում բժշկական ապահովագրության ծառայությունների հետ, որպեսզի ծառայություններ մատուցի շահառուներին անդամագրված մեկ անձի համար տրվող ամսական ապահովագրավճարի փոխարեն: - [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

[կենտրոնական] ամբողջությամբ երեխայի վրա՝ ներառյալ երեխայի բոլոր կարիքները, այլ ոչ միայն պարզապես CCS առողջական խնդիրը⁶»:

2. Ո՞ր վարչաշրջանները և Medi-Cal-ի կառավարվող բուժխնամքի ո՞ր ծրագրերն են մասնակցում երեխայի ամբողջական կարիքներին ուղղված ծառայությունների ծրագրին⁷:

Սկսած 2018թ. հունիսի 1-ից (երեք ապահովագրական ծրագրի և վեց վարչաշրջան)

CenCal Health ծրագիրը Սան Լուիս Օբիսպո և Սանտա Բարբարա վարչաշրջաններում:

Սան Մատեոյի Առողջության ապահովագրական ծրագիրը Սան Մատեոյի վարչաշրջանում:

Կալիֆորնիայի կենտրոնական առողջապահական այլանսը Մերսիդ, Մոնտերեյ և Սանտա Կրուզ վարչաշրջաններում:

Սկսած 2019թ. հունվարի 1-ից (երկու ապահովագրական ծրագիր և տասնհինգ վարչաշրջան).

Կալիֆորնիայի Partnership առողջության ապահովագրության ծրագիրը Դել Նորթ, Հոմբուրդ, Լեյք, Լասսեն, Մարին, Մենդոսինո, Մոդոկ, Նապա, Սիսկիյու, Շաստա, Սոլանո, Սոնոմա, Թրինիթի և Յոլո վարչաշրջաններում:

⁶ Կալիֆորնիայի Առողջապահական ծառայությունների վարչություն: *Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագրի (CCS) խորհրդատվական խումբ* (վերջին այցելություն՝ 2018թ. հունիսի 11): [Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագրի \(CCS\) խորհրդատվական խումբ](#): – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁷ Կալիֆորնիայի Առողջապահական ծառայությունների վարչություն, *Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագրի երեխայի ծառայությունների ամբողջական փաթեթի մոդելի նկարագրություն*, էջեր՝ 16-17, (18-ը մայիսի, 2018թ.) [Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագրի երեխայի ծառայությունների ամբողջական փաթեթի մոդելի նկարագրություն](#): – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

CalOptima-ն Օրինք վարչաշրջանում:

3. Ես ինչպե՞ս կարող եմ իմանալ, թե արդյոք իմ երեխային կփոխանցեն Երեխայի ամբողջական կարիքներին ուղղված ծառայությունների ծրագիր:

Ձեր երեխան կստանա ծանուցումներ փոփոխությունից 90, 60 և 30 օր առաջ: ⁸ Medi-Cal-ի կառավարվող բուժխնամքի ծրագրի գրասենյակից նույնպես կկապվեն ձեզ հետ: ⁹

4. Ես ապրում եմ Մոդոկ վարչաշրջանում: Իմ երեխամ օգտվում է CCS-ից, սակայն չունի Medi-Cal-ի ամբողջական փաթեթ: Արդյո՞ք իմ երեխան կանդամագրվի Երեխայի ամբողջական կարիքներին ուղղված ծառայությունների ծրագրում:

Ոչ: Երեխայի ամբողջական կարիքներին ուղղված ծառայությունների ծրագրում մասնակցելու համար ձեր երեխան պետք է ունենա Medi-Cal-ի ամբողջական փաթեթը: ¹⁰ Ձեր երեխան կշարունակի ստանալ CCS-ի ծառայություններ, քանի որ նա նախկինում ունեցել է Medi-Cal-ի ամբողջական փաթեթը:

⁸ *Id.* Էջ 27-ում: – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁹ Կալիֆորնիայի Առողջապահական ծառայությունների վարչություն, Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագրի (CCS) Երեխայի ծառայությունների ամբողջական փաթեթի մոդելի վերաբերյալ հաճախ տրվող հարցեր: Էջ 3 (վերջին այցելություն՝ 2017թ. օգոստոս) [Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագրի \(CCS\) Երեխայի ամբողջական փաթեթի մոդելի վերաբերյալ ՀՏՀ: – \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹⁰ *Id.* Էջ 2-ում: Հանված իմփի մեջ մտնում են այն երեխաները և պատանիները, ովքեր ընդհանրապես չեն համապատասխանում Medi-Cal-ին կամ ովքեր 19 կամ 20 տարեկան են և այլևս իրավունակ չեն Medi-Cal-ի ծառայությունների ամբողջական փաթեթի համար ըստ Սոցիալական ապահովության մասին օրենքի § 14007.8-ի, որով վճարվում է 18 տարեկան այն երեխաների ու պատանիների ապահովագրական ծածկույթը, ովքեր չունեն ներգաղթյալի բավարար կարգավիճակ:– [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

5. Իմ երեխան օգտվում է CCS-ից, սակայն չունի Medi-Cal-ի կառավարվող բուժխնամք: Արդյո՞ք դա կազդի նրա CCS-ի վրա:

Ոչ: Միայն նահանգային CCS-ից օգտվող երեխաները և Medi-Cal և այլ բժշկական ապահովագրության ծածկույթ ունեցող երեխաները կշարունակեն ստանալ ծառայություններն այնպես, ¹¹ ինչպես նրանք ստանում են այսօր: Medi-Cal չունեցող երեխաների համար CCS-ի ծառայությունները կշարունակեն մատուցվել FFS հիմքով: ¹²

6. Երբ իմ երեխան ընդգրկվի Երեխայի ամբողջական կարիքներին ուղղված ծառայությունների ծրագրում, արդյո՞ք նրա CCS նպաստները կփոփոխվեն:

Ոչ: Ձեր երեխան կշարունակի ստանալ նույն նպաստները CCS-ի ընտրված մատակարարների, հատուկ խնամքի կենտրոնների, մանկական սուր-վարակիչ հիվանդանոցների, դեղատների և այլ ծառայություն մատուցողների կողմից այնքան ժամանակ, քանի դեռ դրանք համարվում են բժշկական անհրաժեշտություն: ¹³

7. Իմ երեխան կարո՞ղ է շարունակել այցելել CCS-ի իր բժշկին և մասնագետներին:

Ձեր երեխան կարող է շարունակել այցելել CCS-ի նույն բժշկին և մասնագետներին, եթե նրանք ընդգրկված են Medi-Cal-ի կառավարվող բուժօգնության բուժսպասարկողների ցանցում: Եթե ոչ, ապա ձեր

¹¹ Վարչաշրջանների կողմից գործարկվող առողջապահական համակարգերում, օրինակ Օրինջ վարչաշրջանի CalOptima համակարգը, Գործընկեր վարչաշրջանները և Սան Մատեոյի Բժշկական ապահովագրության ծրագիրը, Medi-Cal-ի կառավարվող բուժօգնության ծրագրում անդամագրումը պարտադիր է Medi-Cal-ի այլ ապահովագրական ծածկույթ ունեցող բոլոր շահառուների համար, Medi-Cal-ի կառավարվող բուժօգնության ծրագրում անդամագրումը կամավոր է այլ ապահովագրական ծածկույթ ունեցող անձանց համար Երեխայի ամբողջական ծառայությունների փաթեթի ծրագիրն իրականացնող թվարկված մյուս վարչաշրջաններում: - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹² *Id.* էջ 4-ում:- ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹³ *Id.* էջ 3-ում:- ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

երեխան այդ բժիշկներին կարող է տեսնել Երեխայի ամբողջական կարիքներին ուղղված ծառայությունների ծրագիր տեղափոխվելուց հետո մինչև 12 ամսվա ընթացքում: ¹⁴ 12-ամսյա ժամանակահատվածը կարող է երկարացվել որոշակի հանգամանքներում:

Արդյո՞ք կլինեն փոփոխություններ վարչաշրջանների CCS ծրագրում և Medi-Cal-ի կառավարվող բուժխնամքի այն ծրագրերում, որոնք չեն մասնակցում Երեխայի ամբողջական կարիքներին ուղղված ծառայությունների ծրագրին:

Ոչ:

8. Ի՞նչ պատասխանատվություններ է ունենալու Medi-Cal-ի կառավարվող բուժխնամքի ծրագիրը իմ երեխայի CCS ծառայությունների առնչությամբ:

Ձեր երեխայի Medi-Cal կառավարվող բուժխնամքի ծրագիրը հաստատում է ծառայությունները, իրականացնում է գործի վարում և համակարգում է CCS ծառայությունների մատուցումը: ¹⁵ CCS-ի որոշ ադմինիստրատիվ գործառույթներ, որոնք ներկայումս հանդիսանում են վարչաշրջանի CCS ծրագրերի պատասխանատվությունը, կանցնեն Medi-Cal-ի կառավարվող բուժխնամքի ծրագրերին: Այդ գործառույթներն են գործավարական և բողոքների հետ կապված աշխատանքները, ինչպես նաև CCS-ին առնչվող ծառայությունների մատակարարների վճարումը: ¹⁶

¹⁴ *Id.* - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁵ *Id.* էջ 2-3-ում: - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁶ Առողջապահական վարչության խնամքի բաժնի գլխավոր համակարգերի պատասխանատու Պատրիսիա Մաք Զլելանդի նամակն ուղղված Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար կազմակերպության վարչաշրջանային գրասենյակին (2017թ. հունվար) հետևյալ հղումով՝ [Վարչաշրջանի կողմից մշակված CCS-ի Երեխայի ամբողջական ծառայությունների մոդելի \(WCM\) իրականացման ուղեցույց](#): - ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Վարչաշրջանի CCS ծրագիրը շարունակելու է լինել Բուժական բաժնի ծառայությունների պատասխանատուն: ¹⁷

9. Արդյո՞ք CCS-ի տեղական վարչաշրջանային գրասենյակները պատասխանատու կլինեն Երեխայի ամբողջական կարիքներին ուղղված ծառայությունների ծրագրի որևէ բանի համար:

Այո, վարչաշրջանները կշարունակեն կայացնել CCS-ի իրավունակության որոշումները և զբաղվել իրավունակության հետ կապված բողոքարկումներով,¹⁸ վարել Բուժական բաժնի ծրագիրը և իրականացնել բուժական բաժնի համաժողովային ծառայություններ: ¹⁹

10. Ի՞նչ կպատահի, եթե Medi-Cal-ի կառավարվող բուժխնամքի ծրագիրը մերժում է իմ երեխայի CCS ծառայությունը:

¹⁷ Կալիֆորնիայի Առողջապահական ծառայությունների վարչություն, *Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագրի (CCS) Երեխայի ծառայությունների ամբողջական փաթեթի մոդելի վերաբերյալ հաճախ տրվող հարցեր*, էջ 9 (վերջին այցելություն՝ 2017թ. օգոստոս) [Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագրի \(CCS\) Երեխայի ամբողջական փաթեթի մոդելի վերաբերյալ ՀՏՀ](#): – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹⁸ Առողջապահական վարչության ինսամքի բաժնի գլխավոր համակարգերի պատասխանատու Պատրիսիա Մաք Զլելանդի նամակն ուղղված Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար կազմակերպության վարչաշրջանային գրասենյակին (անգլ.՝ California Children’s Services, CCS) (հունվար, 2017թ.) հետևյալ հղումով՝ [Վարչաշրջանի կողմից մշակված CCS-ի Երեխայի ծառայությունների ամբողջական փաթեթի մոդելի \(WCM\) իրականացման ուղեցույց](#), Կալիֆորնիայի Առողջապահական ծառայությունների վարչություն, *Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագրի (CCS) Երեխայի ծառայությունների ամբողջական փաթեթի մոդելի վերաբերյալ հաճախ տրվող հարցեր*, էջ 3 (վերջին այցելություն՝ 2017թ. օգոստոս) [Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագրի \(CCS\) Երեխայի ծառայությունների ամբողջական փաթեթի մոդելի վերաբերյալ ՀՏՀ](#):- [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

¹⁹ *Id.* էջ 5-6-ում:- [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

Դուք կարող եք բողոքարկել: CCS-ի բողոքարկման գործընթացն օգտագործելու փոխարեն դուք կարող եք դիմել բողոքարկման և բողոքների ներկայացման այն գործընթացին, որին պետք է հետևեն Medi-Cal-ի կառավարվող բուժխնամքի բոլոր ծրագրերը: Ընդհանուր առմամբ, դուք կարող եք բողոքարկել Նպաստների բացասական որոշման ծանուցման ամսաթվից հետո 60 օրվա ընթացքում: Medi-Cal-ի կառավարվող բուժխնամքի ծրագիրը բողոքարկման դիմումն ստանալուց հետո ունի 5 օրացուցային օր ստացումը հաստատելու համար և բողոքարկման դիմումն ստանալուց հետո 30 օր՝ իր որոշման մասին ձեզ ծանուցելու համար: ²⁰ Որոշման ամսաթվից հետո դուք ունեք 120 օր նահանգային անկողմնակալ լսումների անցկացման դիմում ներկայացնելու համար: ²¹

11. Ի՞նչ են իրենցից ներկայացնում CCS-ի համարակալված նամակները.²² արդյո՞ք դրանք դեռևս կիրառվում են:

²⁰ Դուք կարող եք դիմել արագացված ընթացակարգով բողոքարկման համար, եթե ձեր երեխայի առողջությունը վտանգի տակ է: Բողոքարկման դիմումն ստանալուց հետո Medi-Cal-ի կառավարվող բուժօգնության ծրագիրն ունի 72 ժամ՝ ձեզ իր որոշման մասին հայտնելու համար: – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

²¹ Կալիֆորնիայի Առողջապահական և հոլմանիտար ծառայությունների վարչություն, Բուժօգնության ծառայությունների բաժին, *Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագրի Երեխայի ծառայությունների ամբողջական փաթեթի մոդելի ծրագրի բողոքների ներկայացման, բողոքարկման և անկողմնակալ լսումների գործընթաց*, էջ 4-5 (2016թ. նոյեմբեր) [Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագրի \(CCS\) Երեխայի ծառայությունների ամբողջական փաթեթի մոդելի \(WCM\) ծրագրի բողոքների ներկայացման, բողոքարկման և անկողմնակալ լսումների գործընթացներ](#), տե՛ս նաև բողոքարկումների և բողոքների ներկայացման մասին մեր հրապարակումը հետևյալ հղումով՝ [Medi-Cal-ի կառավարվող բուժօգնություն. բողոքների ներկայացման և բողոքարկման կարգ](#): – [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

²² Մանրամասն տեղեկատվության համար տե՛ս [Կալիֆորնիայի Ծառայություններ երեխաների համար ծրագիր - Նամակներ](#): - [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

Այո, այն իմաստով, որ դրանք համարվում են ուղեցույցներ: Ծառայության թույլատրման դիմումները, որոնք համահունչ են համարակալված նամակի ուղեցույցի հետ, պետք է հաստատվեն: Սակայն, ըստ դաշնային օրենքների, կառավարվող բուժխնամքի ապահովագրական ծրագրերը երեխաների և պատանիների համար պետք է տրամադրեն նպաստների ավելի լայն և երբեմն էլ ավելի թանկ շրջանակ:²³

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել օգնության դիմումի ձևը: Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Չյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Չարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

Կալիֆորնիայում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս այստեղ. <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>

²³ Կառավարվող բուժօգնության ծրագրի պարտավորությունների բացատրությունը EPSDT (վաղ և պարբերական ստուգման, ախտորոշման և բուժման ծառայություններ Medi-Cal-ի 21 տարեկանից փոքր շահառուների համար) ծրագրի շրջանակում: [Վաղ և պարբերական ստուգման, ախտորոշման և բուժման ծառայություններ Medi-Cal-ի քանմեկ տարեկանից փոքր շահառուների համար նախատեսվող ապահովագրության ծածկույթի պահանջներ: – \(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)